


ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

431

2029/2



ՆԻՄԱՆԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՆ

ՈՒ


— ՍԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ —

ՀԱ. ՄԻ

1800
1800
1800

ՆԻՄԱՆԴ

27



ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՆ

ՈՒ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

~~173847 A 4342~~



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, — ԵԵՐԵՎԱՆ, 1930

Հր. № 1310.

Գրառեպվար № 5197 (բ).

Տիրաժ 5000.

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապուհ
Պատպվեր № 82.

ԱՌԱՋԱԲԱՆ

«Կուլակության շահագործական տենդենցների սահմանափակման քաղաքականությունից անցել ենք կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությանը»՝ համատարած կոլեկտիվացման բազայի հիման վրա։ Այդ հսկայական քեկումը հնարավոր դարձավ ջնորհիվ այն հսկայական նվաճումների, վոր ունեցավ Խորհրդային իշխանությունը ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր բնագավառներում՝ ընթանալով լենինի գծած ուղիով։

Կոմունիստական կուսակցության լենինյան ղեկավարության յեվ գործելակերպի շնորհիվ աննախընթաց վոգեվորություն յեվ իրական պլուտարական ծեռներեցություն հրապարակեց Խորհրդային Միության ամբողջ պլուտարիատն ու խորհրդային հասարակայնությունը։

Սոցիալիստական մրցման քազմաթիվ ծեվերն ու արտահայտությունները, ամբողջ ցեխների յեվ գործարանների ու ֆաբրիկաների հարվածային աշխատանքի անցնելու փաստերը, ինչպես նայեվ զյուղացիական աշխատավորական լայն մասսաների ծգտումը դեպի կոլտնտեսությունները հետեւվանք են լենինյան կենտրոմի հետեւվողական բայլշեվիկյան քաղաքականության։

Բայլշեվիկյան գաղրնանացանը յեվ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարհում մեր ունեցած հսկայական նվաճումները գործնական քայլեր են դեպի համատարած կոլեկտիվացումը յեվ դրա հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու գործում։ Համառ. ու հետեվողական հարծակմամբ մենք քայլում ենք դեպի առաջ յեվ իրազործում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը, վորն, իհարկե, միտարվա գործ չե։

Այսոր արդեն ՀՍԽՀ-ում գյուղացիական տնտեսությունների մոտ մի քառորդը ներգրավված ե կոլտընտեսությունների մեջ։ Դա նշանակում ե գյուղացիական սոցիալիստական վերակառուցման հնգամյակի համարյա կրկնակի կատարում։

Սակայն բնական ե ու հասկանալի, վոր մեր դասակարգային հակառակորդները ձեռքերը ծալած յեվ լուռ ու մունջ չեյին կարող դիտել իրենց, վորպես դասակարգի, լիկվիդացիան կամ իրենց սնունդ տվող արմատների վոչնչացումը։

Պրոլետարիատի հարծակումը պետք ե անխուսափելի կերպով առաջ բերեր դասակարգային պայքարի սրում։ Պրոլետարիատը վորքան վճռական ու խիստ ե հարծակման անցնում դասակարգային հակառակորդի դեմ, այնքան ուժեղ ե դասակարգային հակառակորդը դիմադրում, այդպես ե սովորեցրել մեզ ընկ. Լենինը։ Սակայն դասակարգային հակառակորդի ուժեղ դիմադրությունը կամ դասակարգային պայքարի սրումը յերբեք յեվ յերբեք նշան չի մեր թուլանալու յեվ մեր թշնամիների ուժեղացման։ Ով այդպես ե

մտածում; նա չարաշար սխալվում ե, նա պանիկայի մեջ ե ընկնում յեվ դասակարգային դիրքերը հակառակորդին զիջելու ճանապարհն ե բռնում:

Մեր վճռական ու հետեւղական քաղաքականությունը՝ կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու գործում դրդում ե կուլակությանը որհասական, կյանքի յեվ մահու կովի: Վորքան մեծանում ե մեր ուժը, այնքան կուլակն ու մեր դասակարգային թշնամիները կատաղի յեն կովում, սակայն դա վերջին, վճռական մարտն ե, վորի մեջ պրոլետարիատի հաղթանակն արդեն կանխորոշված ե, կապիտալիստական տարրերի պայքարը մահամերծի վերջին ճիգերն են, և ենինյան ուսմունքի անաղարտ, առանց «ծախ» կամ աջ թեքումների կիրառումը հնարավորություն կտա ավելի արագ իրագործել համատարած կոլեկտիվացումը, ավելի խիստ իզույացիայի յենթարկել (մեկուսացնել) մեր դասակարգային թըշնամիներին:

Դասակարգային այս պայքարում մեր բոլոր հակառակորդները կազմակերպել են ընդհանուր ճակատ: Հայկական բուրժուազիայի մարտական կուսակցության մնացորդների հենարանը գյուղում հանդիսանում ե կուլակությունը: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը յեվ այդ բազայի հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու մեր քաղաքականությունը վոչնչացնում ե Դաշնակցության հենարանը, տնտեսական բազան գյուղում:

Յեվ այդ պատճառով ել պարզ ե ու հասկանալի, վոր Դաշնակցության թափթփուկները պիտի ակտիվ

պայքարի դուրս գային մեր սոցիալիստական շինարարության սրընթաց արշավի դեմ, պիտի փողծեյին կանգնեցնել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքը:

Ներկա պայմաններում դասակարգային պայքարի ամենատարածված ձեվերից մեկն ել կրոնական հավատալիքների, յեկեղեցիների միջոցով պայքարելու ձեմն եւ վոչ վոր չի կարող ժխտել վոր յեկեղեցիներն ու սրբատեղերը հաճախ ոգտագործվում են մեր հակառակորդների կողմից, վորպես ժողովատեղ, կամ ազիտացիայի վայր: Կուլակ, դաշնակ յեվ տերտեր, ահա այն յերրորդությունը, վորն ինչպես միշտ, նույնպես յեվ այժմ հրապարակ ե գալիս վորպես մի ամբողջություն՝ պայքարելու հաղթական սոցիալիստական շինարարության յեվ կոլեկտիվացման դեմ: Տգիտությունն ու խավարը, կրոնական հավատալիքներն ու մնութիապաշտություններն յեղել են այն հիմնաբարերից մեկը, վորի վրա կառուցվել են շահագործման, ալան-թալանի կամ, ընդհանուր խոսքով՝ կապիտալիզմի շենքը:

Բուրժուազիան յեվ տիրող, շահագործող դասակարգերն ոգտագործել են կրոնը յեվ կրոնամոլությունը շահագործվող դասակարգերի հեղափոխական թափն ու եներգիան այլ, շահագործողների համար անմնասուղղությամբ զարգացնելու համար: Կիսաքաղց գոյություն քաշ տվողների յեվ իրենց արյուն-քրտինքով թալանցիների համար յերկրային փառահեղ կյանք ստեղծողների համար բուրժուազիան քարոզել ե դրախտի հեքյաթի մասին:

«Ով իր ամբողջ կյանքում աշխատում ե յեվ կարիքի մեջ ե, նրան կրոնը սովորեցնում ե համբերատարու-

թյուն յեվ հեզություն յերկրային կյանքում, հուսադրելով նրան յերկնային նվերներով: Իսկ նրանց, ովքեր ապրում են ուրիշի աշխատանքով, կրոնը՝ առաջարկելով շատ եժան արդարացման միջոց իրենց շահագործություններով լի զոյտթյան դիմաց՝ սովորեցնում են բարեգործություն անել յերկրային կյանքում, շատ եժան զնով յերկնային բարեկեցության տոմսեր վաճառելով»:

(Հենին. հատոր 8-րդ, եջ 419. «Սոց. յեվ կրոն»):

Լայնածավալ Խորհրդային Միության մեջ, բազմաթիվ քաղաքներում հատկապես վերջին շրջաններում բացվել են հականեղափոխության վորքեր, վորոնք տեղափորված են յեղել յեկեղեցիների յեվ վանքերի մեջ:

Պատմության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, յերբ տիրող, շահագործող դասակարգերը բորբոքել են կրոնական ատելություն, տարբեր աղանդներ կամ կրոններ հանել են իրար դեմ յեվ դրանով խեղղել են հեղափոխական շարժումները կամ թուլացրել են վերջիններս:

Ցարիզմի կազմակերպած հրեյական զարդերը կամ 1905 թվի հայ-թուրքական կոտորածը վերոհիշյալ նպատակին եյին ծգտում:

Այդ պորիոմը, այդ գործելակերպը յուրահատուկ են համաշխարհային բուրժուազիային: Դրան վորպես պերճախոս ապացույց կարող ենք հիշեցնել 1920 թվին Պաղստինում կազմակերպված հրյա-արաբական ընդհարումները, վորոնց բորբոքողն ու հրահրողը անզիական կառավարությունն եր:

Ցետամնաց ու տգետ տարրերի կրոնամոլությունը միշտ լավագույն զենք ե յեղել կապիտալիստական

տարրերի համար՝ հեղափոխական շարժումների դեմ
կռվելու համար:

Այդ պատճառով կրոնի վերացմանը կատաղի կեր-
պով դիմադրում են առհասարակ կապիտալիստական
տարրերը, ինչպես նայեվ մեր յերկրի ներսում մեր
դասակարգային հակառակորդները:

Խնդիրը միայն այն չե, վոր անընդհատի անցնելու,
յերկրի ինդուստրացման յեվ գյուղատնտեսության մե-
քենայացման հետեւանքով կրոնը զրկվում ե հենարա-
նից, մոռացվում ե կիրակին ու կրոնական որացույցը,
ինչպես նայեվ հավատը դեպի գերբնականն ու դեպի
զանազան հրաշքները. Անընդհատը վոչ միայն անկրոն,
հակակրոնական տոմարագրություն ե.

Գյուղն իր տնտեսական-տեխնիկական յետամնա-
ցությամբ, անբավարար կուլտուրականությամբ անո-
տիապաշտ եր, իր վորոշ լուման եր տալիս կրոնին
ու հոգեվորականությանը. Սակայն այսոր հիմնովին
փոխվել ե դրությունը նայեվ գյուղում: Գյուղատըն-
տեսության սոցիալիստական վերակառուցումը՝ տեխ-
նիկական նոր բազայի հիման վրա՝ վերացնում ե անո-
տիապաշտությունն ու կրոնական հավատալիքների
սնուցող հողը: Ճիշտ ե, դա մի կամ յերկու ամսի, կամ
մեկ-յերկու տարվա գործ չի, ճիշտ ե, դա ինքնաբերաբար
չի կատարվելու, այլ անհրաժեշտ ե հետեւողական ու-
ժեղ հակակրոնական աշխատանք, անհրաժեշտ ե խիստ
պայքար նայեվ այդ ճակատում մեր դասակարգային
հակառակորդների դեմ: Անհրաժեշտ ե ճիշտ հակակրո-
նական պայքարով, ուժեղ ու լենինյան շեշտակի հար-
վածներով, հետեւողական, ուազմագիտական բոլոր
կանոններով կազմակերպված հարձակումով ավելի ա-
րագ ու անվնաս դարձնել մեր հաղթանակը:

Հակակրոնական պալքարը յերբեք չի կարող տար-
վել ընդհանուր դասակարգային պայքարից անջատ ու
կտրված, քանի վոր դա հանդիսանում ե ընդհանուր
դասակարգային պայքարի մի մասը։ Մեր դասակար-
գային հակառակորդները հրապարակ են զալիս միաց-
յալ նակատով յեվ ուր նպատակահարմար ե, քողարկ-
վում են կրոնական շղարշով յեվ աշխատում են ոկ-
տագործել հավատացյալների խավարամտությունն ու
տգիտությունը։ Նրանք լավ են հասկանում, վոր նա,
ով դեռ չի հասկացել կրոնի յեվ յեկեղեցու բացարձակ
վնասակարությունը, չի յել հասկացած լինի իր դասա-
կարգային շահերը յեվ հեշտությամբ կրնկնի նրանց
ծուղակը, ովքեր ճգնում են պահել յեկեղեցին ու կրոնը։

Նման մեթոդի ամենալայն կիրառումը մենք տե-
սանք այս տարի հանձինս Պապի փորձերին՝ կազմա-
կերպելու խաչակրաց արշավանք ԽՍՀ Միության դեմ։
Հռոմի Պապի յեվ ֆաշիզմի դաշինքը, վոր կնքվեց
Մուսոլինի յեվ Հռոմի Պապի միջեւ, լրացրեց դա-
շինքների այն շղթան, վոր կնքված եյին կապիտալիս-
տական յերկրների յեվ Պապի միջեվ յեվ նշան եր այն
հարձակողականին, վոր ֆաշիզմը, սոցիալ ֆաշիզմն
ու հոգեվորականությունը ցանկանում եյին սկսել ընդ-
դեմ համաշխարհային հեղափոխական շարժման վե-
րելքի, ընդդեմ համաշխարհային հեղափոխական պրո-
լետարիատի ավանդարդի՝ կոմունիստական կուսակցու-
թյունների։ Կաթոլիկ հոգեվորականությունն ու ուղ-
ղափառ, լուսավորչական յեվ այլ յեկեղեցիների հոգե-
վորականությունը հրեյական ռարիների հետ խոսք-
ները մեկ արած, սկսեցին կոկորդիլոսային արցունք-
ներ թափել, վայնասուն բարձրացնել, լաց ու կոծ

սարքել, սգո միտինգներ կազմակերպել յեվ այն, թե
Խորհրդային Միության մեջ հավատացյալները տանջ-
վում ու չարչարվում են, թե յեկեղեցիները բոլորը
փակված են, տերտերներն ու խեղի «կույսերը» աքսոր-
ված են յեվ այլ հեքյաթներ ու առասպելներ:

Միշտ յեվ մինչեվ այսոր ել կաթոլիկ հոգեվորակա-
նությունը կատաղի պայքար և մղել ուղղափառ յեվ
հրեյական հոգեվորականության դեմ: Ուղղափառ յե-
կեղեցու յեվ հրյա հոգեվորականությունն ել իր հեր-
թին կատաղի պայքարել և կաթոլիկ հոգեվորականու-
թյան դեմ: Աղանդի յեվ կրոնի խնդիրը նրանց համար
շուկայի խնդիր ե: Սակայն այսոր նրանք միացյալ
հակառ են կազմել, քանի վոր իրենց բոլորի գոյու-
թյանն և վտանգ սպառնում:

Միայն Լեհաստանում կաթոլիկ հոգեվորականության
դրդմամբ փակված և ուղղափառ յեկեղեցիների կիսից
ավելին:

Հենց նույն Լեհաստանում անցյալ տարի հավատաց-
յալ քրիստոնյա հակահեղափոխական ուսանողու-
թյունը կազմակերպեց հրեյական զարդեր:

Տարբեր աղանդների յեվ նույնիսկ նույն աղանդի
հոգեվորականությունն իրար ծեռքից «իրենց» ժողո-
վրդին (յեկամտի աղբյուրին) խլելու համար իրար
արյուն են թափում: Դերմանիայում հենց այս տարի
մի շարք յեկեղեցիներ են փակվել քանվորական թա-
ղերում, վորովհետեւ դրանք իրենց ծախքերը չեցին
արդարացնում յեվ ոգուտ չեցին տալիս:

Գաղութային յեվ կիսազաղութային յերկրները վո-
ղողված են զանազան աղանդի ու տիպի հոգեվորա-
կաններով, զանազան կրոնական հիմնարկներով ու

«դպրոցներով», վորոնց նպատակն ե խաչի տեսքի կամ Քրիստոսի անվան տակ կապիտալիստական մոլոխը ներս տանել: Խաչը, զանազան սրբերի պատկերներն ու «թաղթեհները», բարեգործական հիմնարկներն ու նվիրատվությունները այն վարագույրները կամ գառան մորթիներն են, վորոնցով վարագուրված՝ կապիտալիզմը ներս և մտնում կիսագաղութային յերկրները, տեսնում ե իր թալանչիական գործը բոլոր շահագործվածների մեջ: Նույն կաթոլիկ հոգեվորականության ոգնությամբ այսոր՝ 1930 թվին Ֆրանսիական բուրժուազիան Լիբերիայում նեզր կանանց վորպես ստրուկտորի վաճառում ե, նրանցից հարեմներ կազմում կամ Ամերիկայի յեվ Յեվրոպայի հասարակաց տներին ե հանձնում, ծախում:

Կապիտալը հեղափոխական պրոլետարին ելեկտրական աթոռին և նստեցնում, կախաղան բարձրացնում, գնդակահարում կամ տաժանելի չարչարանքների յերնթարկում հոգեվորականության ծեռքով, խաչ ու խաչվառով:

Քրիստոնեյական հեզությունն ու «աստծունն աստծուն, իսկ թագավորինը թագավորին» սկզբունքները, «մի թշիդ ապտակելիս, դեմ արա նայեվ մյուս թուշդ» ուսմունքը, կամ վոչիարային խոնարհությունը յեղել են յեվ են այն զենքերը, վորոնցով միլիոնավոր աշխատավորների վիզն ե կտրվել յեվ միլիոններ են լացել ու սովամահ յեղել: Ցարիզմի որով խոստովանությունն ուժեղ յեվ լավ միջոցն եր հոգեվորականության համար՝ իմանալու վորտեղ ինչ ե կատարվում, վորպեսզի հայոնեն ժանդարմական ախրանկային, բռնել ու տանջել տան հեղափոխականներին:

Մակայն հեզություն ու ներողամտություն քարո-
գող յեկեղեցին միշտ ել ամենակատաղի յեվ զարհու-
թելի ծեփով և խեղդել ամեն մի փորձ, վոր ուղղված
և յեղել յեկեղեցու կամ տիրող դասակարգի շահագործ-
ման դեմ: Բավական և հիշել միջնադարյան ինկվիզի-
ցիան իր միջինավոր զոհերով:

Հենց այսոր ել կաթոլիկ Պապի գլխավորությամբ
բոլոր կրոնականների վոհմակի յելույթը Խորհրդային
Միության դեմ յեվ փորձերը կազմակերպելու խա-
չակրաց արշավանք, վոչ այլ ինչ են, յեթե վոչ կապի-
տալիզմի արշավանքը սոցիալիստական շինարարու-
թյան յեվ համաշխարհային ռեղափոխության վերել-
քի դեմ:

Միանգամայն ճիշտ յեվ տեղին ե ընկ. Լենինի հե-
տեվյալ խոսքը, վորի մեջ միայն «մեզ մոտ» դարձ-
վածքը կարող ենք ներկա մոմենտում փոխարինել
«ամբողջ աշխարհում նորից» դարձվածքով յեվ դրա-
նով պապական շարժումը բնորոշված կլինի: «Խեակ-
ցիոն բուրժուազիան ամեն տեղ հոգացել և յեվ այժմ
մեզ մոտ ել (կարդա՝ «ամբողջ աշխարհում նորից»,
Գ. Պ.) սկսում ե հոգալ այն մասին, վոր բորբոքի
կրոնական թշնամություն, վորպեսզի այդ կողմը թե-
քի մասսաների ուշադրությունը իրապես կարեվոր
յեվ արմատական տնտեսական ու քաղաքական հար-
ցերից»: (Լենին, հատոր 8-րդ, եջ 419, «Սոցիալիզմ յեվ
կրոն»): Միջազգային հեղափոխական շարժումների
ներկա վերելքի շրջանում, յերբ գործադրույները հսկա-
յական չափերի յեն հասել, յերբ տնտեսական գործա-
դրույները վեր են ածվում քաղաքականի յեվ պրոլե-
տարական հեղափոխական բանակը զորահավաք ե ա-

նում ու պատրաստվում մարտի, միջազգային ֆաշիզմը սոցիալ-ֆաշիզմի (Ա ինտերնացիոնալի) անմիջական հովանավորությամբ յեվ ազակցությամբ անցավ խաչակրաց արշավանքի նախապատրաստման, վորապեսզի մի գուցե դրանով թուլացնի միջազգային հեղափոխական պրոլետարիատի միասնական ճակատը:

Հորքան ել խնկի կամ դուխիների չափազանց առատ յեվ ուժեղ հոտով հոգեվորականությունը Պապի գլխավորությամբ փորձում ե ծածկել այն նավթահոտը, վորով լցված են յեկեղեցիները խաչակրաց արշավանք կազմակերպելու փորձ անելու որվանից, չի հաջողվի:

Նավթի հոտը շատ ե ուժեղ յեվ խնկի հոտին հաղթահարում ե:

Նավթային թագավորների դրամն ե զել հոգեվորականության ծայնը:

Նավթի միլիարդատերերի լեզվով ե, վոր այսոր խոսում ե Պապը:

Պապի քարոզած յեվ ԽՍՀ Միության մեջ հալածված այսորվա Թրիստոսը անգլիական նավթային թագավոր Դետերտինգի պատկերն ունի:

Համաշխարհային հեղափոխական պրոլետարիատն այդ բանը լավ հասկացավ յեվ մերկացրեց խաչակրաց արշավանքի ամբողջ եյությունը:

Սակայն, իհարկե, վոչ վոք չպետք ե կասկածի, վոր կապիտալիզմը, թեկուզ հանձինս հոգեվորականության, մեր դեմ դուրս գալու նոր փորձեր չպիտի անի: Վոչ վոք չի կարող կասկածել յեվ չպիտի մտածի անգամ, թե կրոնը, վորպես զենք մեր դեմ կարող ե դադարել գործածական լինելուց:

Հակակրոնական ճակատը, դա մի մասն ե այն ընդհանուր ճակատի, վոր ունի դասակարգային պայքարը: Ընդհանուր ճակատով, բոլոր դասակարգային հակառակորդներին զախցախնելով առաջ շարժվելն ե, վոր ավելի շեշտակի ու հիմնական կղարծնի մեր նվաճումները:

Յուրաքանչյուր բանվոր, աշխատավոր գյուղացի, ամեն մի խորհրդային քաղաքացի վոչ թե պիտի լինի սոսկ անսատված կամ անկրոն, այլ պարտավոր ե լինել հակակրոնական ճակատի ակտիվ մարտիկ:

Մեր դասակարգային հակառակորդները ընդհանրապես յեվ հոգեվորականությունն ել մասնավորապես ներկա դասակարգային պայքարի սրման մոմենտում հնարում են պայքարի նորանոր ծեզեր, դիմում են բազմապիսի ու այլազան խորամանկությունների: Անհրաժեշտ ե մերկացնել բոլոր խորամանկությունները, վորսալ նրանց բոլոր մտքերն ու դավադրությունները յեվ բնում խեղդել, վոչնչացնել նբանց բոլոր փորձերը՝ ուժեղացնելով մարտնչող Անսատվածների Միությունը:

Հակակրոնական կամպանիային պիտի տալ մասսայական բնույթ յեվ ամեն անգամ մերկացնել կրոնական տոնների յեվ ծիսակատարությունների քաղաքան աստառը:

Տոնից տոն, առիթից առիթ տարվող հակակրոնական կամպանիան անբավարար ե յեվ չի կարող արագ կերպով համախմբել իր շուրջը աշխատավորական լայն մասսաներին՝ ակտիվ հակակրոնական աշխատանքի համար:

Անհրաժեշտ ե ստեղծել ամեն մի բնակելի վայրում, ամեն մի քաղլուսիմնարկին կից հակակրոնական ակ-

տիվ, վորոնք հարվածային տեվական պրոպագանդիս-
տական աշխատանքով կհարվածեն կրոնն ու յեկե-
ղեցին:

Հակակրոնական պրոպագանդան շաղկապելով յեզ
ծառայեցնելով ընդհանուր քաղաքական խնդիրներին՝
մենք պարտավոր ենք ծավալել մասսայական քաղա-
քական հակակրոնական կամպանիա:

Դ. ՔԱՅԱՂՅԱՆ

4
28
20
14

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

A T
4347


4387

Բոլոր հավատացլալ հայերն ամեն տարի հունվարի 6-ին, ինչպես և մյուս քրիստոնյաներն ամեն դեկտեմբերի 25-ին, մեծ հանդեսներով, կեր ու խումով, ուրախություններով տոնում են Քրիստոսի ծնունդը և մկրտությունը. Այդ տօնի հետ բոլոր քրիստոնյաները հավատում են Հիսուս-Քրիստոսի գոյությանը. պատմում են նրա ծննդյան, մկրտության և, ընդհանրապես, նրա կյանքի մասին հրաշքներով զարդարված առասպելներ։

Տասնյակ դարեր շարունակ քրիստոնյա գրողներն ու քարոզիչները ավանդում են այդ առասպելները հավատացլաներին. լցնում են այդ հրաշապատում հեքյաթներով և դատարկաբանություններով միլիոնավոր մարդկանց գլուխը, սկսած մանկական հասակից, և իրեւ ճշմարտություն, հալած յուղի տեղ են ընդունել տալիս ամենքին։

Քարոզիչներն ու տերտերներն այդ բոլոր պատմությունները քաղում են ավետարաններից, վորոնք իբր թե գրել են Քրիստոսի աշակերտաները։

Սակայն պատմական գիտությունն այժմ հաստատել և ճշտությամբ՝ այդ ավետարանների թնչ լինելը և մամ ձեռքով գրած լինելը։ Քրիստոնեյական լեկեղե-



ցու ընդունած չորս ավետարանները գրել են վհչ թե
Մարկոս, Ղուկաս, Մաթեոս և Հովհաննես առաքյալ-
ները, վորոնք իբր թե Քրիստոսի աշակերտներն են
լեղել, այլ հորինել են անհայտ հոգևորական գրողներ։
Այդ ավետարանները գրվել են քրիստոնելության
100-400 տարիներում, ուրեմն խոսք չի կարող լինել,
վոր այդ գրել են Քրիստոսի աշակերտները։ Պարզ է,
վոր ավետարանիչները գրելու ելին միմիայն այն, ինչ
վոր հարյուրավոր տարիների ընթացքում քրիստոնյա-
ների մեջ սերունդե սերունդ, բերանե բերան ավանդած
պատմվածքներից ու առասպելներից ելին լսել։ Այդ
ավետարանները միտումավոր գործեր են, վոր շարա-
դրել են հնադարյան քարոզիչները, ղեկավարվելով ի-
րենց լեկեղեցական և նյութական շահերով ու քրիս-
տոնեյական քաղաքականությամբ։ Հնարել են զանա-
գան հեքիաթներ ու ծեսեր, վորոնք բոլորն ել դրամ
պոկելու և տերտերների փորն անցնելու համար են։
Այս դեպքում մենք վոչ մի հիմք չունենք հավատ ըն-
ծալելու ավետարանների մեջ գրված՝ Քրիստոսի ծննդ-
յան ու մկրտության պատմությանը։

ԱՍՏԾՈՒ ՎՈՐԴԻ

Քրիստոնյանները հավատում են, թե Քրիստոսն
աստծու վորդի լի, թե նա նույնիսկ աստված եւ Բալց
գիտությունն այժմ ապացուցում ե, վոր Քրիստոսը
պատմական անձն չի լեղել. նա լերբեք գույություն ել
չի ունեցել։

Յերբ դիմում ենք պատմությանն ու ծանօթանում
ենք նախաքրիստոնեյական հին ժամանակների հետ,

տեսնում ենք; վոր շատ անգամ աստված կամ աստծու վորդի ելին կոչվում սովորական մահկանացուները: Հին Յեղիպառում դեռևս քրիստոնելությունից հազարավոր տարիներ առաջ փարավոնները — թագավորները — համարվում ելին աստծու վորդի: Յեղիպտոսի քրմերը (հեթանոսական քահանաները), վորոնք պետական կրոնի պահպանիչներն ու քարոզիչներն ելին, պահանջում ելին, վոր իրենց թագավորը վոչ միայն «հոգով», այլ և մարմնով համարվի արևի — «Ռա»-լի վորդի: Այդ քրմերի ուսմունքի համաձայն՝ «Ռա»-ն, արեւ-աստվածը, մարմնանում և փարավոնի անձնավորության մեջ: Յեղիպտական քրմերը հորինում և սովորեցում ելին աղոթքներ, վորոնցով ժողովուրդը պետք և աղոթեր ու դիմեր այդ փարավոններին:

Ասորա-Բաբելաստանում բոլոր թագավորները ճանաչվում ելին աստվածային ծագումով: Հին Հունաստանում, իրք Ալեքսանդր Մակեդոնացին, աշխարհակալ թագավորը, հասավ իր հազթական փառքի գագաթնակետին, ավտոնդություն եր պահպանվում, թե նա աստծու վորդի լե. Նրա մայրը, Ոլիմպիադա թագուհին, չնայած, վոր Փիլիպպոս թագավորի կինն եր, իրք թե հղացել եր Զեսից, հին հունական հայր-աստծուց: Ապոլլոն աստվածը համարվում եր հին հունական կայսր Ոգոստոսի հայրը:

Արևունարըու Զինգիդ-Խանը, վոր իր մոնղոլական հօրդաներով ահ ու սարսափ եր տարածել, մահ ու ավերումն եր սփռել միջին դարերում Ասիաի ու հարավ-արևելյան Յելրոպալի մեջ, մոնղոլների համոզմունքով՝ աստվածային ծագումն ուներ:

Կարելի լեր բազմաթիվ այսպիսի որինակներ բերել:

Նախաքրիստոնելական ժամանակները զանազան ժողովրդների մեջ տիրում եր այն հավատալիքը, վոր աստվածները կարող են յերկնքից իջնել և ամուսնական հարաբերություններ ունենալ յերկրի վրա ապրող կանանց հետ։ Այս տեսակ հղությունից ծնվածները լինելու ելին, իհարկե, աստծու վորդի։ Արևելյան ժողովրդների մեջ սովորական բան եր՝ իրենց թագավորներին, աչքի ընկնող պատմական անձերին, հեռուսներին, սրբերին միշտ շրջապատել աստվածալին ծագման առասպելներով։ Նրանք կարծում ելին, վոր ալղակիսի անձերը կարող են ծնվել վհչ սովորական ձևով, այլ ծնվում են միայն տատվածալին սերմից։

Այս բոլորից հետո զարմանալի չի, յեթե քրիստոնելության հիմնադիրները հետեւելին յեգիպտական, ասորա-բարելական, հունական, հռոմելական և այլ հին հեթանոսական կրոնների ալղ տեսակ հավատալիքներին։

Քրիստոնելական սկզբնական քարոզիչներին ու ավետարան գրողներին հարկ չկար գլուխ կոտրել ու յերկար մտածել, վորպեսզի հնարելին «աստծու վորդու» պատմությունը։ Ալղակիսի պատմություններ արդեն պատրաստ կային նրանցից շատ ու շատ առաջ և խոր արմատներ ելին բռնել հեթանոս հավատացյալների մեջ և հարկավոր եր ընդորինակել և կըկնել իսկ հեթանոսներն, ընդունելով քրիստոնելություն, վոչինչ զարմանալի, վոչինչ տարորինակ չելին գտնում, յերբ քրիստոնյա քարոզիչներն ասում ելին, թե Քրիստոսն աստծու վորդի յե, իսկ նրա մալրը՝ Մարիամը՝ կույս եր։

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսին համարելով աստծու վորդի, քրիստոնյաները հավատում են, վոր նրա հղացումն և ծնունդն, իհարկե, աստծուց և լինելու Ուստի ավետարանները պատմում են, թե Գաբրիել հրեշտակապետը լերևացել ե կուս Մարիամին ու ավետել ե, վոր «Հոգին սուրբ» իջել ե նրա վրա, վոր նա ալդ «սուրբ հոգուց» հղացել ե և կծնի վորդի, վորի անունը կինի Հիսուս: Նույն ալդ հրեշտակը լերեռում ե Հովսեփին լերազի մեջ և ասում, վոր նա չվախենա ընդունելու Մարիամին վորպես իր կին, վորովհետեւ նրա ծնած լերեխան ևսուրբ հոգուց» եւ Ուրեմն Քրիստոսը ծնվել ե վհձ թե սովորական կերպով, Մարիամի ու Հովսեփի ամուսնությունից, ալ անարատ հղությամբ:

Ինչպես վերը տեսանք, «աստծու վորդու» գաղափարը գոյություն ե ունեցել զանազան ժողովրդների մեջ դեռևս նախաքրիստոնեական հին ժամանակները:

Անարատ հղության գաղափարը նմանապես գոյություն ե ունեցել նույն ալդ հեթանոսական կրօններում քրիստոնեյությունից հազարավոր տարիներ առաջ:

Այդ կրօններում տիրող ավանդությունների կամ առասպելների համաձայն՝ աստվածներն իջնում ելին լերկնքից և սեռական հարաբերություն ելին ունենում այն կանանց հետ, վորոնց միջոցով ցանկանում ելին մարմանաւալ մարդկային կերպարանքով: Այդ բոլոր առասպելներում միորինակ ձեռվ սովորաբար աստվածները զուգավորվում ելին կանանց հետ լերազում կամ վորպես «սուրբ հոգի», ընդունելով աղավնու, արե-

գակի և լուսնի ճառագալթների կերպարանք, կամ մոռտենում ելին զանազան կենդանիների՝ լեզան, փղի, ոձի և այլ կերպարանքով։ Այս բոլոր դեպքերում կանալք մնում ելին «անբիծ, անարատ կույս»։ Ահա այդ կանանց, համարելով աստվածամայր, սրբադնացնում ու յերկրպագում ելին միլիոնավոր մարդիկ, վորոնք հավատում ելին հոգեսորականների ստեղծած այդ առասպելաբանություններին ու անմիտ հավատացումներին։

Հիշենք մի քանի բնորոշ որինակներ, համոզվելու համար, վոր կուս Մարիամի անարատ հղության հեքիաթը գրեթե նույնն է, ինչ վոր լեզել ե շատ հնում, նախաքրիստոնեական հավատալիքներում և վոր դաընդորինակած ե հեթանոսական առասպելներից։

Յեգիպտոսում մոտ 4000 տարի առաջ, Մետիմվե անունով քրմուհին, կուս մնալով, հղանում և Ամմոն աստծուց և ծնում ե փարավոն Ամենոֆիս III-ին։ Այս փարավոնն իր ծննդյան պատմությունն արձանագրել ե Լուքսոր քաղաքի տաճարի պատին քանդականկարներով, վորոնք այժմ գտնվել են պեղված ավելակներում։

Նույն այդ Յեգիպտոսում կար Հորուս աստծու ծնընդյան առասպելը։ Իդիդա աստվածուհին, կուս լինելով, հղանում և Ոզիրիս աստծուց և ծնում ե Հորուսին։ Իզիդայի տաճարում կար հետեւալ արձանագրությունն այդ արթիվ։ «Յես, Իզիդան, Հորուս թագավորի մայրն եմ, և վոչոք չի բարձրացրել իմ դգեստիս փեշերը»։

Յեգիպտոսից անցնենք Ասորա-Բաբելաստան։ Այստեղ հայտնի Սարգոն թագավորը ծնվել ե անարատ

հղությունից: Հնուց պահպանված մի տրձանագրություն և գտնվել, վորտեղ Սարգոն թագավորն իր մասին ասում ե. «Յես, Սարգոնը, Ազաթալի հղոր թագավորն եմ, մայրս ինձ հղացել և առանց հորս ոգնության»: Ասորա-բարելական աստված Թամմուզը, վոր համարվում եր փրկիչ, նույն ձեռվ և ծնվել Սրա մայրը, Իշտար աստվածուհին, հղանում ե, լեռք ավետարեր հրեշտակը նրան հայտնում ե, վոր ծնելու լե վորդի աստծուց. լեզ կուլս աստվածուհին անարատ հղությամբ ծնում ե Թամմուզին:

Ասորա-բարելաստանին հարեան Պարսկաստանն ել ուներ իր աստված-փրկչի ծննդյան առասպելը: Դա Միհր աստվածն եր, վոր ծնվում ե անարատ հղությունից:

Նման առասպելներով մանավանդ հարուստ ե հին Հունաստանը: Յերեք աստվածուհիները՝ Հերա, Աթենե, Արտեմիս, վորոնց համապատասխանում են հին հոռմելական՝ Յունոնա, Միներվա, Դիանա, հայտնի ելին «Պարթենելա» մականունով, վոր նշանակում ե «կուսական»: Նրանք կուլս ելին հոչակված, չնայած, վոր յուրաքանչյուրը նրանցից մի քանի անգամ ծնել եր: Նույն ձեռվ եր ծնվել Դիոնիս աստվածը իր մայր կուլս աստվածուհի Պերսեֆոնալից, վոր՝ հղացել եր Զես աստծուց:

Դառնանք Հնդկաստանին: Այստեղ ել գոյություն ունեն նախաքրիստոնելական հեռավոր ժամանակներից մնացած նույնանման առասպելներ: Հիշենք միայն Բուդդա ասածու ծնունդը: Սրա մայրը Մայան եր, վորի անունը մեծ նմանություն ունի Մարիամի անվան հետ: Բուդդան, նախքան ծնվելը, ապրում եր լեռկըն-

Քում: Մարգկութիւնը տանջանքներից ու մահից փըրկելու համար վճռում ե նորից մարմանալ, մարդ դառնալ և գալ յերկիր և մարմանալ յերկրում ապրող մի կնոջ միջոցով: Նա ընտրում է կուս Մալալին և, իջնելով յերկնքից, մտնում է Մալալի մարմնի մեջ աստղի կերպարանքով: Մալան յերազում տեսնում է, թե ինչպես ալդ հինգ ճառագալթով աստղը մտնում է իր կողքը... Ալսպիսով նա հղանում է և ծնում Բուդդային:

Ինչպես տեսնում եք, բավական նման է Քրիստոսի ծննդյան առասպելին:

Ալդ և ալլ նման առասպելները պատրաստի նյութեր ելին, վորից ոգտվել են ավետարանների գրողներն ու քրիստոնելական սկզբնական քարողիչները: Ալդ հնագույն հեթանոսական առասպելներում գտնում ենք նույն գծերը, ինչ վոր պատմում են ավետարանները և ալլ հին քրիստոնելական գրողները Քրիստոսի ծննդյան մասին և հավատացնում են միամիտներին, հրամցնելով իրեն պատմական իրողություն:

Սրանով պետք է բացատրել քրիստոնելության առաջին հաջողությունները, Հեթանոսները, ընդունելով քրիստոնելություն, տեսնում ելին, վոր իրենց նոր աստվածը—Քրիստոսը նույնպիսի ծնունդ և ունեցել, ինչպես և իրենց նախկին հեթանոս աստվածը կամ աստվածները:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Ավետարաններն ասում են, վոր Քրիստոսը ծնվել է Հրեւաստանի Բեթղեհեմ քաղաքում: Ավետարանների բացատրությունները, թե ինչմեր Քրիստոսի ծնողները

Բեթղեհեմումն են լեզել նրա ծննդյան ժամանակ, ի-
րարից միանգամայն տարբերվում են։ Այս հանգա-
մանքը կասկածելի լեզարձնում ավետարանների վկա-
յության ճշմարտությունը և ցուց ե տալիս, վոր հնա-
րած բացատրություններ են դրանք։ Բայց լեթե ավե-
տարանները միորինակ ձևով մատնանշում են Բեթղե-
հեմ քաղաքը, վորպես Քրիստոսի ծննդյան տեղ, այդ
բացատրելու լեզանով, վոր քրիստոնեական գրողնե-
րը նպատակ են ունեցել Քրիստոսի ծննդյան պատ-
մությունը կապել հրեյական ավանդությունների ու
մարդարենությունների հետ, իսկ այդ մարդարենությունն-
երն ասում ելին, թե հրելության փրկիչ Մեսիան՝
Քրիստոսը ծնվելու լե Բեթղեհեմ քաղաքում։

Ուրեմն Քրիստոսը ծնվել ե Բեթղեհեմում վոչ թե
այն պատճառով, վոր նրա ծնողներն այնտեղ են լե-
զել, այլ վորովհետեւ այդ քաղաքն, ինչպես հրլաներն
ելին հավատում, արդեն հնուց և ի վերուստ կանխո-
րեն վորոշված եր իբրև գալիք Մեսիալիք—Քրիստոսի
ծնվելու տեղ։ Բեթղեհեմն եր լինելու՝ ըստ մարդարե-
ների խոսքերի՝ «այն քաղաքը, ուսկից լերևալու լե
սպասված առաջնորդը, վոր ազատելու լե աստծո ընտ-
րյալ ժողովուրդը՝ Իսրայելին»։

Քրիստոնեական գրողները պնդում են, թե Քրիս-
տոսի ծնունդը լեզել ե «Հրեյաստանի Հերովդես թա-
գավորի որոք», հռոմեական Ոգոստոս կայսեր թա-
գավորության 30-րդ տարին։ Ավետարանիչներից մեկն
ել ավելի հաստատ դարձնելու համար իր հաղորդած
փաստը, ավելացնում ե, վոր Քրիստոսի ծննդյան ո-
րերը կայսեր կողմից հրաման ե դուրս լեկել՝ ամբողջ
հռոմեական պետության ստհմաններում մարդահա-

մար (աշխարհագիր) անել, և այդ մարդահամարն առաջինն եր, յերբ Կվիրինիուսը Սիրիալի կառավարիչ եղ»:

Գիտնականների մանրամասն ուսումնասիրություններից արդեն պարզվել ե, վոր ավետարանների հաղորդած այդ պատմական փաստերն ու սրանց ժամանակագրությունը միանգամայն սխալ են: Հոգմելական ու հրելական վոչ մի հին պատմագիր, վորոնց գրվածքները հասել են մեղ, տեղեկություն չի տալիս, թե Ոգոստոս կայսրի ժամանակ ամբողջ հոգմելական պետության մեջ ընդհանուր մարդահամար յեղած լինի: Պարզվում ե նաև, վոր Հերովդես թագավորը չի ապրել Սիրիալի հոգմելական փոխարքա Կվիրինիուսի ժամանակները:

Ինչպես տեսնում ենք, Քրիստոսի ծննդյան ժամանակի հարցն ել վոչ մի պատմական ճշտություն չի ներկայացնում, վոչ մի հավատ չի ներշնչում, շնորհիվ հաղորդած սխալ ու անհիմն տեղեկությունների: Այս հարցն ել Քրիստոսի ծննդյան տեղի հարցի պես շինծու և առասպելական ե:

Ահա այդ յերկու հարցերի նկատմամբ քրիստոնյագրողները ափաշկարա հնարովի տեղեկություններ են տալիս: Նրանք նպատակ են ունեցել մոլորեցնել նոր քրիստոնելացած հավատացյալներին և իրեւ պատմական փաստ ներկայացնել Քրիստոսի ծնունդը, վորի համար, իհարկե, անհրաժեշտ եր ցույց տալալի ծննդյան տեղն ու ժամանակը:

ՔԱՐԱՑՐԸ ՅԵՎ ՄՍՈՒՐԸ

Ավետարաններից մեկում նկարագրվում ե, թե Մարիամ կուսը, ծնելով Հիսուսին գոմում (փարախում),

նրան բարուրում ե լաթերով և դնում մսուրի մեջ, վո-
րովինետև թեթղենեմում, ուր յեկել ելին Մարիամն ու
Հովսեփը աշխարհագրի պատճառով, հուրանոցում ա-
զատ տեղ չելին գտելի Անվավեր ճանաչված մի քանի
ավետարաններում (բոլոր ավետարանների թիվը հաս-
նում եր առաջները մինչև 55) հիշվում ե վորպես
Քրիստոսի ծննդյան տեղ վոչ թե գոմը, այլ քարալը:
Քարալը արդեն Մարիամ աստվածածինն իր յերե-
խալին տանում ե գոմ և տեղավորում մսուրի մեջ,
վորտեղ փոքրիկ Քրիստոսին յերկրպագում են յեզն
ու եշը:

Անշուշտ այս ամբողջ պատմվածքն առասպելական
ե, ինչպես և Քրիստոսն ինքն ու սրա մասին ավետա-
րանական մյուս պատմությունները: Սակայն պարզ-
վում ե, վոր նախաքրիստոնելական մի քանի հեթա-
նու աստվածների ծննդյան մասին պատմվում ե նույ-
նը. գոմը, քարալը, ընդհանրապես փարախը և մսու-
րը շատ աստվածների ծննդյան տեղ ե ծառալել:

Հնդկական Վեդա կոչված կրոնական գրքերում
պատմվում ե աստծու ծննդի մասին, վոր տեղի յե-
ունեցել քարալը և մսուրի մեջ ու այնտեղ նմանա-
պես յեղել են յեզն ու եշը: Հին յեզիպտական Հորուս
աստծու մասին, վոր ծնվել ե կույս Խղիդալից, ասվում
ե, թե յեզիպտացիները «պաշառում ելին կույսից ծըն-
ված և մսուրի մեջ դրված մանուկ-փրկչին»: Հին պար-
կական Միհր աստվածը ծնվել ե մի քարալըրում: Հին
հունական նախաքրիստոնելական ավանդությունների
համաձայն՝ Դիոնիսոս, վոր Զես աստծու և աստվածա-
ծին Սեմելայի վորդին եր, ծնվել ե քարալը մեջ, վոր-
տեղ ներկա յե յեղել նաև մի կով: Նմանապես քարալ-
ըրումն ե աշխարհ յեկել Հերմես աստվածը:

ԹԵ հին և թե վերջին ժամանակները քրիստոնյա
ուխտավորներին թեթղեհեմում ցուց ելին տալիս մի
քարալր, վորտեղ իբր թե ծնվել ե Քրիստոսը, բայց
դեռևս առաջին դարերի քրիստոնյա գրողները հիշա-
տակում են, վոր այդ քարալրը քրիստոնելութլունից
առաջ պաշտվում եր վորպես Թամմուզ աստծու ծնընդ-
յան տեղ: Թամմուզը ասորա- բարելական հնադարյան
աստված եր, վորի պաշտամունքը խիստ մեծ հարգանք
ուներ ու տարածված եր ամբողջ Ասիայում քրիստո-
նելութլունից շատ առաջ:

Ուրեմն ալստեղ քրիստոնելութլունը հարմարվել եր
նախաքրիստոնելական հավատալիքներին և յուրաց-
րել այդ ամենն իր կրոնի մեջ, վոր հեշտ լինի նոր կրոնի
տարածումը. ուրիշ խոսքով՝ քրիստոնելացրել են հե-
թանոսական առասպելներն ու հրամցրել ժողովըր-
դին վորպես քրիստոնելական: Այդ տեսակ առասպել-
ներն ունեն նաև իրենց սոցիալ-տնտեսական բացա-
տրութլունը: Նրանք կարող ելին ծագել այն ժողովըրդ-
ների մեջ, վորոնք ապրում ելին անասնապահությամբ
ու յերկրագործությամբ, այսինքն տնտեսական մի
գործունելությամբ, վոր պտտվում եր փարախի (քա-
րալրի ու գոմի) և մսուրի շուրջը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՐԸ

Ավետարանների մեջ վոչ մի տեղեկություն չենք
գտնի, թե վեր որն ե իսկապես ծնվել Հիսուսը: Սա-
կայն քրիստոնելական յեկեղեցին արևմտյան յերկրնե-
րում ստհմանել ե տոնել Քրիստոսի ծնունդը և հա-
մարել այդ ծննդյան որը՝ դեկտեմբերի 25-ը, իսկ արե-
վելյան յերկրներում՝ հունվարի 6-ը: Սրանով մասամբ

հաստատվում և այն փաստը, վոր քրիստոնյաներն
առաջին դարերում բնավ սովորություն չեն ունեցել
տոնելու Քրիստոսի ծնունդը։ Միայն լեզուրդ կամ չոր-
րորդ դարերումն և սկիզբ առել այս տոնակատարումը։
Ամենահին պատմական տեղեկությունը, վոր ունենք
Քրիստոսի ծննդյան տոնի որվա մասին, վերաբերում
և 354 թվականին։ Այդ տարվանից մնացած մի հին
հոգմելական ձեռագիր որացուցի մեջ կա հիշատա-
կություն Քրիստոսի ծնունդը գեկտեմբերի 25-ին տո-
նելու մասին։ Կա մի պատմական տեղեկություն ևս
431 թվականից, թե Արենելքի, նմանապես Յեղիպտո-
սի քրիստոնյաները տոնում եին Հիսուսի ծնունդը
հունվարի 6-ին։

Քանի վոր քրիստոնելությունը կենտրոնացած եր
դեռևս Արենլան յերկրներում, Հիսուսի ծնունդը սո-
վորաբար տոնվում եր հունվարի 6-ին։ Հետագալում
արդեն, մոտավորապես 3—4-րդ դարերում, յերբ քրիս-
տոնելությունը մուտք՝ գործեց ու հաստատվեց Արե-
մալան յերկրներում (Յեղիպտական), այդ որը սկսե-
ցին տոնել գեկտեմբերի 25-ին։

Ի՞նչով բացատրել ալի՛ Հին հեթանոսական Յեղիպ-
տոսում Արեւաստծու՝ Ոզիրիսի ծննդյան որը համար-
վում եր հունվարի 6-ը։ Այդ որը սովորություն կար
կրոնական շքեղ հանդեսներով և ժողովրդական մեծ
ուրախություններով տոնելու Յեղիպտական տատղա-
գետների ու քրմերի սահմանած որացուցով՝ այդ որե-
րին սկսվում եր արեւադարձը ձմեռվանից գեպի գարուն,
սկսվում եր որվա յերկարումն և տաքության ավելա-
ցումն։ Հետեւապես Արեւաստծու ծնունդը կապվում
եր բնության ալի՛ յերկութի հետ։ Այս տեսակետնե-

ըով ելին ղեկավարվում նաև մյուս արևելյան հեթա-
նոսական կրոններն իրենց արև-աստվածների ծննդյան
որը տոնելիս: Ցեվ ահա, քրիստոնեական լեկեղեցին,
ինչպես վոր մեծ չափերով լուրացըել եր հեթանոսա-
կան կրոններից բազմաթիվ պաշտամունքներ ու հավա-
տալիքներ, այնպես ել լուրացըեց հունվարի Յ.ի ծննդյ-
ան հեթանոսական տոնը ու սկսեց հավատացնել, թե
իբր այդ որն ե ծնվել Հիսուսը:

Եերբ քրիստոնելությունն անցավ Արևմուտք, սկզբ-
բում Հռոմ, այն ժամանակվա համաշխարհային այդ
մայրաքաղաքը, Հիսուսի ծննդյան տոնի որը լենթարկ-
վեց փոփոխման: Հռոմում կուտակվել ու կենտրոնաց-
վել ելին գրեթե բոլոր նվաճված լերկրների տիրապե-
տող հեթանոսական կրոնները: Նորամուտ քրիստոնե-
լությունն ստիպված եր ուժեղ մրցում տանել այդ
կրոնների դեմ, վորոնց մեջ ամենամեծ ազդեցությունն
ուներ հին պարսկական կրոնի Արև-աստված Միհրը:
Միհրի պաշտամունքը շատ եր տարածված Հռոմում
և նրա ծննդյան որը տոնվում եր դեկտեմբերի 25-ին:
Քրիստոնելությունն ու միհրականությունը, մրցելով
իրար հետ, անշուշտ լերկար չելին կարող դիմանալ
միմյանց կողքին: Քրիստոնելությունը կարողացավ
հաղթանակել: Միհրի պաշտամունքին նվիրված հա-
վատացյալները ահագին թվով անցնում ելին քրիս-
տոնելության կողմը. այդ բանը շատ հեշտ եր անել,
քանի վոր այդ լերկու կրոնների միջև նմանությունը
խիստ մեծ եր:

Սակայն քրիստոնելությունն, իր հետ միտցնելով
Միհրի հավատացյալներին, միենուին ժամանակ դյու-
րին լուրացնում եր նաև այդ հեթանոսական կրոնի

հավատալիքները։ Հենց միհրականներն իրենց հետ
ելին բերում և ձուլում նոր ընդունած քրիստոնելա-
կան կրոնի հետ նախկին հավատալիքներն ու պաշտա-
մունքները, վորոնք այնքան նմանում ելին քրիստո-
նելութիւնը։ Այսպիսով ել փոխանցվեց դեկտեմբերի
25-ի ծննդյան տոնը, վոր կատարվում եր ի հիշատակ
Միհրի։ Արդեն 4-րդ դարում այդ տոնը դուրս հանեց
գործածությունից հունվարի 6-ի տոնը, վոր տիրա-
պետում եր Արևելքում։ Միայն մի քանի ազգեր, ինչ-
պես հայերը, պահեցին անփոփոխ հունվարի 6-ի որը
տոնելու սովորությունը։

Ուրեմն Հիսուսի ծննդյան որը, ինչպես և Քրիստոսի
կյանքին վերաբերյալ մյուս դեպքերն ու անցքերը
քրիստոնյանները յուրացրել են նախաքրիստոնելական
կրոնների մեջ լեզած ավանդություններից ու առաս-
պելներից։

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԾԱԳՈՒՄԸ

Հին հեթանոս ժողովրդները, դեռևս հաղարավոր տա-
րիներ քրիստոնելությունից առաջ, աստվածացնում
ելին բնության ուժերը։ Շրջապատող բնությու-
նից եր կախված նրանց անտեսական գործունելու-
թյունն, այն ե՝ յերկրագործությունն ու անամնապա-
հությունը։ Բնության ուժերից եր կախված նրանց
կյանքն ու գոյությունը։ Բնության ուժերի մեջ ամե-
նից ավելի նշանակություն ուներ արևը, ուստի ամե-
նից շատ հարգում և պաշտում ելին արևին։ Սրան
պատկերացնում ելին իբրև մարդկությունը սիրող բա-
րի աստված, վոր տալիս ե տաքություն, լուս, կյանք,

հացահատիկներ, պառուզներ, գինի, ուրախություն և
այլն։ Այդ արևը, ինչպես հեթանոսական կրոնն եր հա-
վատացնում, աստվածամարդ եր, մարդկալին փրկիչ
եր, մարդկանց մեղքերի քավողը։ Նա մարդկանց մեղ-
քերի և փրկության համար չարչարվում ե, մեռնում և
տպա հարություն ե առնում։ Այդ աստվածամարդը,
կամ արև-աստվածը, զանազան ժողովրդների մեջ հայտ-
նի է տարբեր անուններով։ Հին Յեգիպտոսում նա
կոչվում եր Ոզիրիս, Ասորա-Բարելաստանում — Թամմուզ,
հին Պարսկաստանում — Միհր (Միթրա), Փյունիկիայում
— Ադոնիս, Փոյուգիայում — Ատտիս, հին Հունաստանում
— Դիոնիս և այլն։

Անուններով տարբեր այդ աստվածները խիստ նման-
վում ենին իրենց ելությամբ, ունենալով միենուն աստ-
վային հատկությունները։ Նրանց մասին պատմում
ենին համանման կրօնական ավանդություններ ու ա-
ռասպելներ։ Բոլոր այդ աստվածները, ինչպես արդեն
վերը ցուց ենք տվել, ծնվել են անարատ հղությամբ,
կույս մայրերից, ծնվել են գոմում կամ քարայրում,
զրվել մսուրի մեջ։ Անա այդ հնադարյան հեթանոսա-
կան աստվածների հատկություններն են, վոր ավետա-
րաններն ու այլ քրիստոնելական դրվածքները վերա-
գրում են Քրիստոսի անձնավորությանը։ Քրիստոնեա-
ները պատկերացնում ու յերեակալում ենին Քրիստո-
սին, հետեւելով հեթանոսներին, վորպես արև-աստված,
վորպես աստվածամարդ։

Ի՞նչ իմաստով ելին ըմբռնում հին հեթանոսները
իրենց արև-աստծու ծնունդը և ի՞նչ նշանակություն
ելին տալիս այդ որվա տոնին։

Մենք գիտենք, վոր դեկտեմբերի վերջերը և հուն-

վարի սկզբները արեց դառնում և ձմեռվանից դեպի
գարուն։ Որերն սկսում են լերկարել, գիշերները՝ կար-
ճանարի Սկսում և ավելանալ արեի լույսի տեղությունը
և տաքության ուժը, բնությունն սկսում և արթնաց-
ման նշաններ ցուց տալ, Յերկրագործ ու անասնա-
պահ ժողովրդները, տեսնելով այդ, ուրախանում ելին։
Նրանց ձմեռվա պաշարը հատնելու վրա լեր լինում։ և
ահա շուտով կրացվի գարունը, և իրենք հնարավորու-
թյուն կունենան սկսելու հողագործական աշխատանք-
ներ։ նրանք կկարողանան շուտով ստանալ իրենց ա-
նասունների կաթը, թոշունների ծուն, դաշտալին ու-
տելու կանաչներն ու արմտիքը։

Այդ ուրախությունն եր, վոր ամեն տարվա ալդ ժա-
մանակը արձագանք եր գտնում մարդկանց մեջ։ Այդ
յերկրագործ ժողովրդների համար ձմեռալին արևագար-
ձը համարվում է մեծ տոն, նշանավոր որ, յերբ ծնվում
և նոր գարնան արեց, ծնվում և արե-աստվածը, վո-
րից ալնակես կախված եր իրենց ամբողջ տնտեսական
կլանքը, ամբողջ գույությունը։ Այդ տոնը կատարվում
եր մեծ հանդեսներով, կրոնական ծեսերով, սնոտիա-
պաշտական սովորություններով ու հավատալիքներով,
վորոնք կապված ելին հողագործական աշխատանքնե-
րի ու անասնապահության հօգսերի հետ։ Այդ կրոնա-
կան ծիսակատարություններն ու հավատալիքները մո-
գական գործողությունների նշանակություն ունելին,
վորոնցով հին հեթանոսները կարծում ելին արհեստա-
կան կերպով աղղել բնության վրա, վորպեսզի արա-
գացնեն գարնան գալուստը, շտապեցնեն բնության
արթնացումը ձմեռվա քնից, ուժեղացնելով արևի ջեր-
մությունը։

Հին հեթանոս ժողովրդները, քրիստոնելություն ընդունելով, չելին կարող միանգամից փոխել իրենց աստվածների՝ ծննդյան տոնի հետ կապված դարավոր կրոնական սովորությունները, տոնական ուրախությունները, սնոտիապաշտություններն ու նախապաշտառումները, վոր բլիսում ելին նրանց սոցիալ-տնտեսական պայմաններից, արմատացել ելին նրանց նիստուկացի, կենցաղի մեջ:

Քրիստոնելական կրօնի քարոզիչների ստեղծած «Քրիստոսի ծննդյան տոնը» ձուլվեց ու միախառնվեց այդ տոնական սովորությունների, սնոտիապաշտական ծեսերի ու հավատալիքների հետ, վորոնք ծագել ու զարգացել ելին հնագարյան հեթանոսական, նախաքրիստոնելական ժամանակներից:

ՔՐԻՍՏՈՆԵՅԱԿԱՆ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ՄԵջ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Քրիստոսի ծննդյան տոնակատարությունը մեղանում տակավին այսոր ել պահպանել և բաղմաթիվ հետքեր, վոր հիշեցնում են արեկի ու պտղաբերության վերածընվող աստծու պատվին կատարվող նախկին լերկրագործական տոնը՝ Այնտեղ նկատում ենք հետքեր, վորոնք ցույց են տալիս, թե տոնական ծիսակատարությունների մեջ ինչ սպասելիքներ և հույսեր ելին ունենում լերկրագործ ժողովրդներն այն բարիքների մասին, վոր բերելու ելին իրենց հետ նոր լեկող գարունն ու ամառը՝ Դեռ այսոր ել ժողովուրդը Քրիստոսի ծննդյան տոնակատարության ժամանակ մեծ նշանակություն և տալիս կրակին կամ վառվող ճրագին (լուսին), վոր նրա լե-

ըեակալութիամբ արե-աստծու ծննդի պատկերացումն է: Դեռ այսոր ել ժողովուրդը ծննդյան տոնակատարման միջոցին մեծ նշանակություն ե տալիս այնպիսի առարկաներին և նյութերին, վորոնք գալիք բերքի ու պտղաբերության գաղափարն են ներկալացնում:

Հայ ժողովուրդը, մանավանդ գլուղացիությունը, Քրիստոսի ծննդյան տոնի հետ պահել ե հին հեթանոսական լերկրագործական տոնի հավատալիքները, սնոտիապաշտական ծեսերն ու հին կենցաղային սովորությունները: Սակայն պետք ե տսել, վոր հունվարի 6-ի Քրիստոսի ծննդյան տոնի հետ լեզած միքանի ծեսերն ու հավատալիքները մեր ժողովուրդը տեղափոխել ե ու միացըել ե հունվարի 1-ի, այն ե՝ «Նոր-Տարի» տոնի հետ: Հունվարի 1-ի նոր-տարին նորամուտ բան ե հայերի մեջ: Հին հայերի նոր տարին կոչվում եր ՚Նախարար: Զանազան պատմական շրջաններում այդ որը տոնվում եր տարրեր տմիսներին: Սովորաբար ՚Նախասարդը տոնվել է մարտի սկզբներին, գարնանամտին, ինչպես սովորություն եր այդ նաև հին լեզիպտացիների, բարելացիների, հին պարսիկների մեջ: Բայց հետագայում, նոր դարերում, հայերը նույնպես սկսեցին նոր-տարին հաշվել հունվարի 1-ից, մոռացության տալով ՚Նախասարդը, վորը թեև խուլ, լետամնաց գավառական անկյուններում տակավին շարունակում եր իր կենցաղային գոլությունը պահպանել իրըև լերկրողական ժողովրդական տոն:

Ցերք ուշադրության առնենք այն հանգամանքը, վոր հունվարի 1-ի տոնին, այսինքն «Նոր-տարուն» կամ ինչպես ժողովուրդն ե տառմ, «տարրեմուտ»-ին չորս որից հետո հաջորդում եր անմիջապես ծննդյան տոնը,

կնկատենք, վոր ժողովրդական հասկացողություններով ստեղծվում եր տեղական տոնակատարություն, վորտեղ հունվարի 1-ը և հունվարի 6-ը ձուլվում ու խառնվում են իրար հետ:

Տեսնենք, թե ի՞նչ հավատալիքներ ու սովորություններ են կապված Քրիստոսի ծննդյան հետ հայ ժողովրդական կենցաղում:

Ամեն մի յերկրագործի ու անասնապահի հոգսն ու միտքն այն եր, թե ի՞նչ բերք ե նա ունենալու յեկտտարին: Նախնադարյան յերկրագործը զիմում եր աստվածներին, գլխավորապես արեա-աստծու ոգնությանը աղոթքներով ու մատաղներով, գուշակություններ եր անում, խոստումներ անում և այլն: Ահա այդ նշաններն են մնացել Քրիստոսի ծննդյան հետ կապված ժողովը դպական այժմյան սնոտիհապաշտությունների մեջ:

Բորչալուի և մասամբ Ղազախի հայերի մեջ առաջները կար մի սովորություն, վոր կոչվում եր տարեմտի բյուրուկ: Տարեմտի գիշերը վերցնում ելին մի մեծ հաստգերան և ծայրը գնում ոջախի մեջ, վոր անընդհատ վառվելու յեր մինչև ծննդյան գիշերը: Ծննդյան յերեկոյին (թաթախման գիշերը) այս գերանից մնացած խանձողները կամ մոխիրը տանում թաղում ելին հանդերում, վոր առաջիկա բերքն առատ լինի և կարկուտը չխփի արտերին: Նմանապես այդ մնացած խանձողից պահում ելին տանը, և կարկուտ յեկած ժամանակ դուրս ելին ձգում, վորպեսզի «յերկինքը խաղաղվի»:

Նույն այդ սովորությունը զարմանալի նմանությամբ գոյություն ունի նաև բոլղար, սերբ, կրոատ և Բալկանյան թերակղզու այլ ազգությունների գլուղացիության մեջ. այդ «տարեմտի քլութուկը» նրանց մեջ կոչվում ե բաղնյակ:

Ծննդյան տոնի համար ծառից գերան, ալսինքն
տարեմտի քլութուկ» պատրաստելու հիշատակը մնա-
ցել և հայ ժողովրդական մի լերգի մեջ, վոր ասվում ե
ծննդյան գիշերը, «ավետիս» մանգալիս:

«Առին ուրագ, առին սղոց, ալելուկա,
կնացին ծառնի խնկան, ալելուկա,
ուրագ տվին, ծառնի ճչաց, ալելուկա,
սղոց քաշին, արլուն բղխաց, ալելուկա»:

Կրակ վառելու ալդ սովորությունը պահվել ե այժմ
հայ գլուղացիության մեջ հատկապես նոր-տարու որը,
նախ՝ ոջախում ցախ վառելու և ապա՝ շնորհավորանք-
ներ անելու սովորության մեջ։ Նույն նշանակու-
թյունն ունի ծննդյան տոնի լերեկոլին թաթախման
սեղանի վրա մոմեր վառելը։

Զանազան թխվածքներ են պատրաստում (ասիլ-բա-
սիլ, կլկալ, զուլաճ, գաթա և այլն), մեջը դրամ կամ
մի ալլ փոքրիկ կոշտ բան են դնում։ Ում վոր ընկնի
ալդ թագցրած գրամը, նա լել բախտավոր կլինի։ Ալդ
թխվածքներով ու լեփած նոր հացերով գուշակություն
են անում տան անդամների բախտի, լեկող տարվա
սպասելիք բերքի առատության մասին։ Ալդ թխվածք-
ներից անց են կացնում լեղների ու գոմեշների լեղ-
յուբներից, վորպեսզի այդ տարին հորը լցվի ցորենով։
Զե՞ վոր ցորենը, ալլուրը, հացը արեւ-աստծու տվածն
ե, սրա զորությամբ ե բանում հացահատիկը։

Ժողովուրդը հավատում է, թե ծննդյան կես գիշերին,
հունվարի 5-ին (միքանի տեղերում հունվարի 1-ի
գիշերը) գետերը, առուները և ընդհանրապես հոսող
ջրերը միաժամանակ կանգ են առնում մի վայրկենա-
չափ։ Ավ վոր կարողանա իմանալ այդ վայրկյանն և

դնի հոսող ջրի մեջ վորեա իր, վերջինս իսկուլն վոսկի կղառնա: Այստեղ պարզապես պահպանվել ե նախնական լերկրագործ ժողովրդի հավատալիքը ջրի վերաբարերմամբ, վոր նրա համար վոսկու նշանակություն ե ստանում, տնտեսական ահազին արժեք ունի: Չե վոր առանց ջրի հողագործի ամբողջ աշխատանքը կկորչի և ինքը կզբկվի բերքից:

Ծննդյան տոնին իրար շնորհավորելիս՝ միշտ հացի, բերքի առատություն են մաղթում. քեզ և ուրախություն անելիս ծննդյան տոնին՝ լերգերի մեջ մեծ մասմբ բերքի մասին են հիշում:

«Ձեր տունը մտնու հազար բարի.

աճար, ցորեն, կորեկ, գարի.

լիքը հորեր շատ ունենաք,

կարմիր որեր շատ ունենանք,

ուրախ կյանք միշտ կուշտ փորով...»:

Վոր իրոք ժողովուրդը ծննդյան տոնի մասին այն հավատն ե ունեցել, թե արեւաստվածն ե վերածնվում և դրանով սկսվելու ե գարունը, սրտ հետ ել լերկրագործական աշխատանքները, լերեւում ե այն խոսքերից, վոր ժողովուրդը լերգում ե ծննդյան գիշերը.

«Որհնյալ աստված կյարունքացավ,

երգյան կյութան մեգնվեցավ»...

Այս բոլոր սննդիապաշտական սովորություններն իրենց ժողովրդական լերգերով, շնորհավորանքներով, գուշակություններով՝ ցույց են տալիս, վոր ծննդյան տոնը զուտ լերկրագործական--անասնապահական քնույթ ունի: Այդ տոնի հետ ե կապում ժողովուրդը լեկող տարվա իր գյուղացիական տնտեսության բախտընա ամեն տեսակ միջոցներ ե վորոնում, հոգմերով և

մտահոգված, վոր հաջողություն ունենա առաջիկա հոգագործական աշխատանքներին:

Նախնադարյան լերկրագործն ալդ ամենը սպասում եր արե-աստծուց, վորի վրա լեր դնում իր ամբողջ հուկան ու ապագենը. նա կարծում եր, վոր իր լերկրագործական ամբողջ տնտեսությունը կախված եր ալդ արե-աստծուց և սրա բարի կամքից: Քրիստոնելություն ընդունելով, ալդ լերկրագործը նույն հավատալիքները դարձեց Քրիստոսի վրա, վորին նա շարունակում եր համարել արե-աստված, հացի ու ըերքի աստվածություն, մարդկության փրկիչ: Յեվ հնադարան ժողովուրդն ուրախանում եր, իբար շնորհավորում, վոր ծնվում և նորից արե-աստվածը, Քրիստոսը: Իսկ ալդ արե-աստվածը, Քրիստոսը ներկայանում եր ժողովորդի լերեակալության մեջ այն կրակով, վոր նա վտառում եր ոջախում (տարեմուտի քլութուկ կամ ցախավել) կամ փայլում եր թաթախման լերեկոյի մոմերից և կամ այն տոնական թխվածքներով, վոր նա պարտադիր պատրաստում եր ալդ տոնի առթիվ:

ՔՐԻՍՏՈՆԵԼՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյաները նմանապես հավատում են, վոր Հիսուսը 30 տարեկան հասակում մկրտվել և Հովհաննես Մկրտչի ձեռքով և իրը թե ալդ որից ել սահմանվել և մկրտության խորհուրդն ու ծիսակատարությունը:

Մինչեւ մկրտությունը հնագույն հեթանոսական ծես ե, վոր հազարավոր տարիներ քրիստոնելությունից առաջ գոյություն ուներ շատ ժողովրդների մեջ: Զովէ մկրտություն կատարում ելին հին Յեփիպտոսում: Պարսիկների միհրական (միթրակի) կրոնում ընդունված

եր, վոր ալդ կըոնական համայնքը մտնող ամեն մի նորեկ պիտի ընկղմվեր ջրի մեջ։ Ներկալումս ել «մկըրտ-վում են» զանազան ծեսերով վայրենի ցեղերի մեջ պատահները՝ թլփատումով կամ այլ մարմնական տան-ջանքով, յերբ արբունքի լեն հասնում և ճանաչվում չափահաս։

Ջրով մկըրտվելը հայտնի յեր նաև հին բարելացինե-րին, վորոնք հավատում և յերկըրպագում ելին «Եա» անունով ձուկ-աստծուն։ Նույն այդ ձուկ-աստվածը պաշտվում եր Պաղեստինում հրլաների մեջ և հին Հու-նաստանում «Ոհաննես» անունով։

«Ոհաննես»-ի պաշտամունքը և սրա հետ կապ ունե-ցող մկըրտությունը համատարած հարգանք եր վայելում հրլաների մեջ, վորոնք հրելական կըոն ընդունող ա-մեն մի հեթանոսի համար ջրով մկըրտությունը պար-տադիր ելին ճանաչում։

Յերեխաների մկըրտությունը ջրով՝ ընդունված եր հին պարսիկների միթրայական կըոնում, և քրիստոն-յաներն այդ ծեսը յուրացրել են այդ տեղից։ Հայտնի յե, վոր յերեխաների մկըրտության խորհուրդը՝ քրիս-տոնյա հոգեորականությունը պարտադիր որենք և դարձրել սկսած 4-րդ դարից։ Իսկ մինչ այդ, սկզբնա-կան քրիստոնյաները, հրելական կըոնի նման, մկըրտ-վում ելին չափահաս տարիքում՝ քրիստոնելական հա-մայնքը մտնելիս։

Յեկ ահա հունվարի 6-ին քրիստոնելական յեկեղե-ցին Քրիստոսի ծննդյան տոնի հետ միասին կատարում ե նաև Քրիստոսի մկըրտության տոնը։ Ինչպես վոր Քրիստոսի ծնունդն ինքնըստինքյան մի հնարովի պատմություն ե յեղել, այնպես ել այդ մկըրտության

ամբողջ պատմութիւնն արվեստական կերպով ստեղծված մի առասպել եւ Բավական և ուշադրության առնել այն ընուզոց հանգամանքը, վոր Քրիստոսին մկըրտողի անունն եւ յեղել «Ոհաննես», այսինքն՝ նախնադարյան հրլաների կամ հուկների «Ոհաննես» ձուկաստվածը. իսկ այդ ձուկ-աստվածը մեզ տանում եւ դեպի հնագույն հեթանոսական կրօնների մեջ յեղած ջրի պաշտամունքին, ջրի հետ կապ ունեցող հավատալիքներին:

Քրիստոնելական, մանավանդ հայ յեկեղեցին ամենամեծ շքով և կատարում Քրիստոսի մկրտության տոնը, սարքելով կրօնական մեծ հանդես՝ «Ճրորհնեքը»: Դա իսկապես մի կոպիտ թատրոնական ներկայացում ե, վորտեղ դերասաններ են դառնում յեղիսկոպոսն ու տերտերները: Սրանք շքեղ զգեստավորված, թափորով, բուրգառներով ու խաչլառներով, շարականների յերգերով, ջրի մեջ կաթեցնելով մեռոնը և գցելով խաչը՝ Քրիստոսի Հորդանան գետ գնալն ու այնտեղ մկրտվելն են ներկայացնում: Այդ տեսակ աչք կապող և շացնող ձևերով յեկեղեցին գերում ե հավատացյալ ամրոխի զգացմունքներն և իր ազդեցությունն ամուր և պահում հավատացյալների վրա:

Սակայն Ճրորհնեքի հանդեսն ինքնին ուրիշ վոչինչ ե, յեթե վոչ հնագարյան յերկրագործական ու խաչնարածական ժողովրդների այն հավատալիքներից մեկը, վորով դիմում ելին մոդական (կախարդական) միջոցների, վորպեսզի ապագա բերքի համար անհրաժեշտ ջուր ունենան բնությունից ու ազատ մնան յերաշտից, չորությունից: Հիրավի, վերը տեսանք արդեն, վոր մկրտության դադարիարը հին հեթանոսական կրօնը

կապում եր «Ո՞ւաննես» անունով ձուկ-աստծու հետ
իսկ ձուկ-աստվածը կարող եր ապրել միայն ջրի մեջ։
Հետևապես «Ո՞ւաննեսը» իրենից անձնավորում եր ջրի
աստվածությունը, ջրի բնական ուժը։

Յեթե մենք հետեւնք այն սովորություններին ու
ժողովրդական հավատալիքներին, վորոնք կապված են
«ջրորհնեքի» տոնի ու ծիսակատարության հետ, կտես-
նենք, վոր այստեղ ամենայն հարազատությամբ պահ-
պանվել են մոգական (կախարդական) միջոցների գա-
ղափարները։ Յերբ կատարվում ե գետի (Հորդանան)՝
վրա ջրի որհնելը և նրա մեջ մեռնի կաթեցնելը, ժո-
ղովրդից շատերը թափվում են գետը՝ լողանալու։ Դա
մի ծիսական լողացումն ե, վոր միանգամայն կրոնա-
կան գաղափար և պարունակում։ Այնուհետև իրար վրա
Հորդանանի «որհնած» ջուր են ածում կամ ջուրն են
մտնում։ Այդ միջոցներով՝ նրանք կարծում են՝ ստի-
պել բնությանը հետեւնունույն որինակին, զրդել նրան
առատ ջուր տալու արտերին ու դաշտերին։ Նույն նպա-
տակով ել «ջրորհնեքին» գետից «որհնած» ջուրը տուն-
են տանում, վորպեսզի «բարաքլաթ»՝ առատություն-
լինի, հաջողություն գա առաջիկա տարին։ Թէ բերքի
և պտուղների համար, և թե ազատվեն հիվանդություն-
ներից, չարից ու լերաշտից։

Ահա այսպես և հավատում Քրիստոսի ծննդյանը
կրոնի ճիրաններում խեղդվող տգետ լերկրագործը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Քրիստոնեյական լեկեղեցին վոչինչ նոր բան չի ա-
սել իր ստեղծած Հիսուս Քրիստոսի մասին։ Քրիստոսի

ծնունդն ու մկրտությունը կրօնական առասպելներ են յեղել, վորոնք գոյություն են ունեցել շատ հնում, տակավին նախաքրիստոնելական հավատալիքների աշխարհում։ Այս զեղքում նույնպես առասպելական նղաոնում Քրիստոսի անձնավորությունը, վոր, ինչպես հաստատվում է մի շաբք գիտական փաստերի հիման վրա, յերբեք գոյություն չի ունեցել, յերբեք իրական, պատմական չի յեղել, ինչպես և գոյություն չեն ունեցել կույս Մարիամը և սրա ամուսին Հովսեփը։

Այդ բոլոր առասպելաբանությունները Քրիստոսի մասին հորինել ե քրիստոնելական յեկեղեցին, լուրացնելով այդ ամենը հեթանոսական հավատալիքներից ու առասպելներից, նրանց տալով իր կրօնական վարդապետության, իր յեկեղեցական շահերին համապատասխան գույն։

Քրիստոնելական յեկեղեցին հնարել ե Քրիստոսին, վորպեսզի կարողանա հիմնավորել իր ստեղծած կրօնը։ Այդ հնարովի Քրիստոսին վերագրած կրօնական ուսմունքով են թունավորում բոլոր տեսակի հոգեորականներն ու տերտերները մարդկանց միտքն ու հոգին, կաշկանդում նրանց կամքն ու աղատ ձգտումները։

Քրիստոնելական կրօնը մի հզոր զենք ե գարձել տիրող կապիտալիստական դասակարգերի ու սրանց սպասարկող հլու հոգեորականների ձեռքին, վորպեսզի ամրացնեն իրենց տղղեցությունը շահագործվող մասսաների վրա։ Յեկ այդ շահագործվող, գլխավորապես գլուղացիական մասսաները, կուրորեն հավատալով քրիստոնելական առասպելներին, հայած լուղի տեղ ընդունելով տերտերների քարոզներն ու խրատները, շարունակում են մնալ այն հեթանոսական նախնադարյան

հավատալիքների ճանկերում, իերը հողագործը կարծում եր, վոր իր տնտեսության հաջողությունները, բերքի առատությունը կախված ե Քրիստոսից և այլ նման հնարած աստվածներից ու սրբերից:



Տոնելով Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը կեր ու խումով, անզուսպ ուրախություններով, վորոնք վերածվում են խայտառակ արբեցողության, անմիտ ու վասսակար ժամանցների, հավատացյալ աշխատավորը միայն քայլալում ե իր տնտեսությունն, ապրում ե տգիտության ու կենցաղային լետամնացության մեջ, անզոր կանգնած ե բնության դեմ մղած իր կովում, չիմանալով ոգտագործել այդ բնության ուժերը:


Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն ե, վոր սկսում ե բանալ մեր բանվորության ու հավատով կուրացած գլուղացիության աչքերը և կամաց-կամաց աղատագրել նրան կրոնական դարավոր կապանքներից: Հաղթական սոցիալիզմը բաց ե անում աշխատավոր մասսաների առաջ նոր ուղիներ, վորոնք տանում են նրանց դեպի տնտեսական-հասարակական նոր կարգերը, ցուց են տալիս նոր կենցաղի որինակներ: Կրոնական թուլունից սթափված մեր աշխատավորությունն սկսում ե հասկանալ, վոր բնության դեմ կովելու, նրա ուժերն իր տնտեսության զարգացման համար ոգտագործելու նպատակով՝ հարկավոր են կատարելագործված միջոցներ, գիտության փորձերի վրա հիմնված կատարելագործություններ ու տեխնիկա:


Քիմիան ու մեքենան, կողեկտիվ աշխատանքն ու սոցիալիստական լեռանդը կհաղթահարեն բնության ուժերին և կծառալեցնեն մարդկության շահերին, աշխատավորական տնտեսության բարգավաճմանը, վո-


րին մինչև որս միշտ խոչընդուռ են հանդիսացել կրօնը,
յեկեղեցին ու հոգեորականությունը:

Միշտ վստահ իր սեփական ուժերին, միշտ հենված
իր աշխատանքին, դեն շպրտելով կրօնական հավա-
տալիքներն ու տոնական հիմար ծիսակատարություն-
ները, մեր աշխատավոր մասսաներն ընդունակ կլինեն
կերտելու նոր կենցաղը, կառուցելու այն սոցիալիս-
տական հասարակակարգը, վոր ծառալելու լե մինչև
վերջին ժամանակները շահագործվող, կեղեքվող մաս-
սաների լերջանիկ ու զիտակից կլանքին:









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039287

(094)

Ниманд

РОЖДЕНИЕ И КРЕЩЕНИЕ
ХРИСТА

A 1-
4347

Госиздат ССР Армении

Эривань, 1930 г.

Գիւն Ե 8 ԿՈՊ. (Մ. 1 $\frac{1}{2}$ Ժ.)